Ներկայացված է
«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի « » 202 թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Ե. Սերոբյան

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԱՐՏԱՔԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ

ԳՅՈՒՄՐԻ -2024

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

2. ԿԵՆՏՐՈՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ 5

3. ԿԵՆՏՐՈՆԻ ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 28

3. 1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ 28

- WBL4JOB ԾՐԱԳԻՐ 29
- SMARTI ԾՐԱԳԻՐ 32

3. 2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ 35

- ՎԱԼԼԱԴՈԼԻԴԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԻՍՊԱՆԻԱ 35
- ԳՐԱՆԱԴԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԻՍՊԱՆԻԱ 37
- ԼԻՍԱԲՈՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ 38
- ՅԱՍԻԻ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՒ ՅՈՀԱՆ ԿՈՒԶԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ՌՈՒՄԻՆԻԱ 39
- ՍՈՒՉԱՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ՌՈՒՄԻՆԻԱ 40
- ՏԻՄԻՇՈԱՐԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ՌՈՒՄԻՆԻԱ 41
- ՆԵԱՊՈԼԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, ԻՏԱԼԻԱ 42

3. 3. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ, ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 45

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արտաքին համագործակցության կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) 2022-2023 ուստարում իրականացված աշխատանքների հիմնական ուղղությունները եղել են՝

ա/ Կենտրոնի ամենամյա աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացում,

բ/ Կենտրոնի ընթացիկ աշխատանքների կազմակերպում և իրականացում, մասնավորապես՝

- ✓ բուհերի կարողությունների զարգացմանն ուղղված միջազգային համագործակցության ծրագրեր, դրանց ընթացիկ արդյունքների ամփոփում, մշտադիտարկման (մոնիտորինգի) անցկացում,
- ✓ բուհերի աշխատակիցների և ուսանողների ակադեմիական շարժունությանն ու փոխանակումներին ուղղված միջազգային համագործակցության ծրագրեր,
- ✓ ՀՀ և արտասահմանյան բուհերի, այլ կազմակերպությունների հետ համագործակցություն, նոր պայմանագրերի կնքում,
- ✓ մասնակցություն ՇՊՀ ինքնավերլուծության և հավատարմագրման աշխատանքներին:

Պայմանավորված վերը նշվածով՝ Կատարված աշխատանքները խմբավորվել և ներկայացվել են երկու հիմնական խմբերով.

Առաջին խմբում ներառված և ներկայացված աշխատանքներն ու դրանց արդյունքներն առնչվում են ՇՊՀ 2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագրին, 2022թ. ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված դիտարկումների և առաջարկությունների հիման վրա կազմված՝ Թերությունների վերացման գործողությունների ծրագրին և նախանշված են Կենտրոնի 2023-2027թթ. հնգամյա/ամենամյա աշխատանքային ծրագրերով:

Իսկ երկրորդ խմբում ներկայացված են Կենտրոնի ընթացիկ գործունեությունը և դրա արդյունքները, մասնավորապես՝ ՇՊՀ-ում իրականացվող և Կենտրոնի կողմից համակարգվող՝ միջազգային համագործակցության Էրազմուս+ ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքները: Սրանց իրականացման ձևաչափը, բովանդակությունն ու ժամկետները պայմանավորված են այդ ծրագրերի աշխատանքային փաթեթներով ու կոնսորցիումի գործընկեր համալսարանների կողմից նախանշված գրաֆիկով: Այսինքն, սույն հաշվետվության մեջ ներկայացվում են այդ ծրագրերի շրջանակներում նախատեսված այն աշխատանքներն ու դրանց կատարման արդյունքները, որոնք համընկնում են հաշվետու ժամանակահատվածի հետ: Այս խմբում ներկայացված են համալսարանների կարողությունների զարգացմանն ուղղված Էրազմուս+ **WBL4JOB, SMARTI** ծրագրերի շրջանակներում Կենտրոնի համակարգմամբ ու մասնակցությամբ իրականացված աշխատանքները և դրանց արդյունքները: Ինչպես նաև ներկայացվում են ակադեմիական փոխանակման ու շարժունության ծրագրերի շրջանակներում Ռումինիայի երեք, Իսպանիայի՝ երկու, Իտալիայի՝ մեկ և Պորտուգալիայի մեկ համալսարանների հետ կատարված աշխատանքները և դրանց արդյունքներն ամփոփող հաշվետվությունները: Կարծում ենք, որ այս ոլորտում Կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների արդյունավետության ցուցիչ կարելի է դիտել այն իրողությունը, որ հաշվետու այս ժամանակահատվածում նույնպես, ինչպես որ նախորդ շրջանում, ընդլայնվել ու բազմազան է դարձել ակադեմիական շարժունության ու փոխանակումների ծրագրերի դիմորդների շրջանակը՝ ներառելով ոչ միայն անգլերեն լեզու և գրականություն, այլև հոգեբանություն, կենսատեխնոլոգիա, աշխարհագրություն մասնագիտությունների բակալավրի և մագիստրատուրայի ուսանողներին:

Այստեղ ներկայացված են նաև Հայաստանի և արտասահմանյան այն համալսարաններն ու այլ կազմակերպությունները, որոնց հետ հաշվետու ժամանակահատվածում կնքվել են համագործակցության նոր պայմանագրեր:

2. ԿԵՆՏՐՈՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնի ամենամյա աշխատանքային ծրագրի կատարողականը՝ ըստ Արտաքին համագործակցության կենտրոնի 2023-2027թթ. հնգամյա/ամենամյա աշխատանքային ծրագրերի ներկայացված է Աղյուսակներ 1.1-ում, 1.2-ում և 1.3-ում:

Աղյուսակ 1.1

N	Խնդիրներ	Լուծումներ/ գործողություններ	Լուծման/ գործողության իրականացման ժամանակահատվածը	Կատարողականի ցուցիչ
1 (3.1)	*Բարձրորակ և մրցունակ լրացական կրթական ծառայություններ/դասընթացներ:*	***1.1 (3.1.1)*** *- Հիմնադրամի շահառուների և շահակիցների կրթական լրացուցիչ կարիքների պահանջներին համահունչ ոչ ֆորմալ կրթական խորհրդատվական ծառայությունների ներդրում (առկա, հեռավար և/կամ հիբրիդային տարբերակներով):*	*2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակ* *2026-2027 ուստարվա 2-րդ կիսամյակ* *I I եռամսյակ 2023 - III եռամսյակ 2027*	➢ *Առնվազն 3 ոչ ֆորմալ կրթական ծառայություններ: Մասնավորապես՝- 1. «Սոցիալական աշխատանքի հիմունքներ» դասընթաց, 2. «Հաղորդակցումը որպես սոցիալական փոփոխության իրականացման միջոց» դասընթաց, 3. «Ներառական կրթության կազմակերպում» դասընթաց, 4. «Դրամաշնորհային ծրագրեր գրելու և ներկայացնելու կարողությունների զարգացում» դասընթաց, 5. «Կոնֆլիկտների կառավարում» դասընթաց-2023-2027թթ.:*

		1.2 (3.1.2) *- Հանրային պահանջարկ ունեցող, աշխատաշուկայի և հիմնադրամի շահառուների և շահակիցների պահանջներին համահունչ լրացական դասընթացների ներդրում (առկա, հեռավար և/կամ հիբրիդային տարբերակներով):*	*2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակ-2026-2027 ուստարվա 2-րդ կիսամյակ* *II եռամսյակ 2023 - III եռամսյակ 2027*	➢ *Առնվազն 3 լրացական դասընթացներ: Մասնավորապես՝ 1. «ՈԱՇ-ին և ՈՈՇ-ին համահունչ կրթական վերջնարդյունքների ձևավորմանն ուղղված ՄԿԾ-ների կառուցում և իրականացում» դասընթաց, 2. «Հետազոտական աշխատանքների կատարման կարողությունների զարգացում» դասընթաց, 3. «Աշխատանքի վրա հիմնված ուսումնառության-ԱՀՈՒ-ի կազմակերպման և իրականացման հարցեր» դասընթաց, 4. «Emis.am հարթակից օգտվելու հիմունքներ» դասընթաց-2023-2027թթ.:*

Շահառուների համար ոչ ֆորմալ և/կամ լրացական դասընթացների, կրթական խորհրդատվական ծառայությունների մշակման ու կիրառման աշխատանքների իրականացման առումով ցանկանում ենք նշել, որ մեր կողմից կազմվել է ոչ ֆորմալ դասընթացներից «Հաղորդակցումը որպես սոցիալական փոփոխության իրականացման միջոց» թեմայի նախնական տարբերակը և մինչև 2024-2025 ուստարվա սկիզբը կներկայացվի քննարկման ու հաստատման: Համապատասխան մասնագետների հետ քննարկվում են «Կոնֆլիկտների կառավարում», «Սոցիալական աշխատանքի հիմունքներ» և «Ներառական կրթության կազմակերպում» ոչ ֆորմալ դասընթացների մշակման աշխատանքները: Ասենք, որ Կենտրոնը փորձում է մինչև ամբողջական դասընթացների մշակումն ու ներդրումը, հնարավորության շրջանակներում լրացնել այդ բացն արտաքին համագործակցության գործընկերի միջոցով: Մասնավորապես՝ ՇՊՀ-ի ուսանողների և աշխատակիցների համար կազմակերպվել են վերապատրաստումներ, աշխատանքային հանդիպումներ, որոնք նվիրված են եղել դրամաշնորհային ծրագրեր գրելու, հետազոտական աշխատանքների կատարման կարողությունների զարգացմանը, ինչպես նաև որակավորումների ազգային ու ոլորտային շրջանակներին համահունչ կրթական վերջնարդյունքների ձևակերպմանն ուղղված ՄԿԾ-ների կառուցման ու իրականացման հարցերին:

Մեր կողմից կազմվել է նաև «Աշխատանքի վրա հիմնված ուսումնառության (ԱՀՈՒ) կազմակերպման և իրականացման հարցեր» լրացական դասընթացի աշխատանքային տարբերակը, որը նույնպես մինչև հաջորդ ուսումնական տարվա սկիզբը կներկայացվի քննարկման ու հաստատման: Նախատեսված մյուս դասընթացների ուսումնական նյութերի պատրաստման աշխատանքները դարձյալ քննարկվում են համապատասխան մասնագետների հետ: Սակայն նշենք, որ ըստ էության, հաշվետու ժամանակահատվածի ընթացքում նախատեսված արդյունքները չեն ապահովվել:

2. (3.2)	*Բարձրորակ մարդկային ռեսուրսներ*	***2.2 (3.2.2)*** *- Հաջողված գործատուների մասնագիտական կադրերի ներգրավում ուսումնական և հետազոտական գործընթացում:*	*2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակ 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակ* *I փուլ III եռամյակ 2023 - III եռամսյակ 2024 Շարունակական՝ ըստ կարիքի*	➢ *Ուսումնական և հետազոտական գործընթացներում ներգրավված առնվազն 3 մասնագետներ պրակտիկ ոլորտում լավ փորձ ունեցող ու հաջողված գործատուներից: Մասնավորապես – Գործընկեր բանկերի Գյումրու մասնաճյուղերից, հանրակրթական ուսումնական հաստատություններից, սելեկցիոն կայանից, սոցիալական ծառայության կենտրոններից և ՀԿ-ներից - 2023-2027թթ.:*

Այս աշխատանքների իրականացմանը նպաստող գործոններից են ինչպես ՇՊՀ-ում իրականացված Էրազմուս+ **WBL4JOB**, **ABioNet** ծրագրերը, այնպես էլ ավելի վաղ իրականացված **SuToMa** և **Տեմպուսի** մեկ այլ ծրագիր, որոնց արդյունքում ՇՊՀ-ում ներդրվել են **Կայուն զբոսաշրջություն**, **Սոցիալական աշխատանք**, **Կենսատեխնոլոգիա** մասնագիտությունները, մշակվել և փորձարկվել է աշխատանքի վրա հիմնված կրթության (ԱՀՈ) մոդելը: Նշված ծրագրերը ՇՊՀ-ում համակարգել է Արտաքին համագործակցության կենտրոնը: Այդ ամենը հնարավորություն է տվել, որ բուհը համագործակցի համապատասխան ոլորտների գործատուների հետ և նրանց ներկայացուցիչներին ներգրավի ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման տարբեր փուլերում: Մասնավորապես՝ դասախոսական, գործնական և լաբորատոր աշխատանքներում, մասնագիտական ու հետազոտական պրակտիկաներում, ավարտական աշխատանքների ու թեզերի ղեկավարման, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների աշխատանքներում ներգրավված են Գյումրու Սելեկցիոն կայանի, գործընկեր բանկերի Գյումրու մասնաճյուղերի, զբոսաշրջության ոլորտի հաստատությունների, սոցիալական ծառայության ոլորտի, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների ու հասարակական կազմակերպությունների փորձառու մասնագետներ:

3. (3.3)	*Միջազգայնացում և համագործակցություն*	***3.1 (3.3.1)*** *- Հիմնադրամի միջազգայնացման հայեցակարգի մշակում և ներդրում՝ շահառուների ու շահակիցների կարիքներին համահունչ և վերջիններիս ակտիվ ներգրավմամբ:*	*2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակ* *2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակ* *I I եռամսյակ 2023 - I եռամսյակ 2024*	➢ *ՇՊՀ-ի միջազգայնացման մշակված և գործող հայեցակարգ (բուհի արտաքին համագործակցության և միջազգայնացման հստակեցված ուղղություններով և ոլորտներով)-2024թ., 1-ին եռամսյակ:* ➢ *Միջազգային համատեղ ծրագրերի թվաքանակի աճ-Միջազգային համագործակցության ծրագրերի գործընկերների հետ դրամաշնորհային ծրագրերի կազմում և հայտադիմումների ներկայացում-2023-2027թթ.:*
		3.2 (3.3.2) *- Միջազգային համագործակցության շրջանակների ընդլայնում և ոլորտների բազմազանեցում:*	*2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակ* *2026-2027 ուստարվա 2-րդ կիսամյակ* *I I եռամսյակ 2023 - III եռամսյակ 2027*	➢ *Ակադեմիական շարժունության մասնակիցների թվաքանակի աճ-Էրազմուս+ ծրագրի և արտասահմանյան գործընկեր բուհերի հետ արդեն կնքված համագործակցության պայմանագրերի շրջանակներում ակադեմիական շարժունության և փոխանակումների կազմակերպում և անցկացում-2023-2027թթ.:*

Կենտրոնի ամենամյա աշխատանքային ծրագրում նշված է՝ ունենալ ՇՊՀ-ի միջազգայնացման մշակված հայեցակարգ: Վերջինս հաշվետու ժամանակահատվածում մշակվել է Կենտրոնի կողմից և արդեն հաստատվել բուհի գիտական խորհրդում - mijazgajnacman-hayecakarg.pdf (shsu.am): Ավելացնենք նաև, որ, ըստ էության, արտաքին համագործակցության և միջազգայնացման ոլորտում առաջընթաց ենք համարում այն, որ մշակվել ու ներդրվել է ՇՊՀ-ի միջազգայնացման հայեցակարգը, որում հստակեցվել են միջազգայնացման հիմնական ոլորտները և դրանք համահնչեցվել են բուհի ՌԾ-ով նախանշված երեք ռազմավարական նպատակների իրագործումն ապահովող կենտրոնների գործունեության հետ՝ միջազգայնացման գործընթացի ընդհանուր համակարգումը վերապահելով Արտաքին համագործակցության կենտրոնին:

2022թ. նոյեմբերի 24-ին ՇՊՀ-ում մեկնարկեց Հայաստանում Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակի կողմից իրականացվող Էրազմուս+ տեղեկատվական հանդիպումների շարքը: Ամեն տարի անցկացվող հանդիպմանը մասնակցում էին Գյումրու բուհերի պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ:

Մասնակիցներին ողջունեցին ու արդյունավետ ընթացք մաղթեցին ՇՊՀ ռեկտոր Երվանդ Սերոբյանը և Հայաստանում Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակի համակարգող Լանա Կարլովան: ՇՊՀ ռեկտորը կարևորեց բուհի մասնակցությունն ինչպես Էրազմուս+ բուհական կարողությունների զարգացման, այնպես էլ ակադեմիական շարժունության ծրագրերին, հույս հայտնեց, որ ՇՊՀ-ն ավելի շատ ներգրավվածություն կունենա Էրազմուս+ գործողություններում:

Բուհերի կարողությունների զարգացման ծրագրերի մրցույթին ընդառաջ՝ Լանա Կարլովան ներկայացրեց Էրազմուս+ 2021-2027 ծրագրի հնարավորությունները բարձրագույն կրթության ոլորտում, խոսեց նաև 2021թ. նոր մեկնարկած Էրազմուս Մունդուս Նախագծեր (Erasmus Mundus Design Measures) գործողության հնարավորությունների մասին:

Դասախոսների և վարչական կազմի համար վերապատրաստում անցկացրեց Էրազմուս+ Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետ Արևիկ Օհանյանը՝ «Բուհական դրամաշնորհներ. ինչ է պետք իմանալ» թեմայով: Մասնակիցները թիմային աշխատանք կատարեցին և դրամաշնորհային ծրագրեր կազմելու գործնական հմտությունները զարգացրեցին: Փորձագետը կարևորեց նաև դրամաշնորհային ծրագրեր կազմելիս առաջնահերթությունների մշակումը, դրանցում բուհի և կրթության ազգային ռազմավարության արտացոլումը:

Ուսանողների և շրջանավարտների հետ զուգահեռ անցկացված հանդիպմանը Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակի ներկայացուցիչներ Վարդ Ղուկասյանը և Էդիթ Սողոմանյանը տեղեկություններ տվեցին Էրազմուս Մունդուս և Էրազմուս+ կրթաթոշակներին դիմելու կարգի, ժամկետների, պայմանների մասին, պատասխանեցին մասնակիցների հարցերին- https://shsu.am/erzmus-day/:

Արտաքին համագործակցության կենտրոնը ՀՀ և ԵՄ գործընկեր համալսարանների հետ մասնակցել է Էրազմուս+ ծրագրի նոր շրջափուլին երեք հայտադիմումներ ներկայացնելու աշխատանքներին, որոնցից մեկը՝ **T4GREEN** ծրագիրը շահել է մրցույթում, և դրա իրականացման աշխատանքներն սկսվել են 2024 թվականից՝ Հայկական պետական մանկավարժական համալսարանի համակարգմամբ:

ՇՊՀ-ի՝ եվրոպական համալսարանների հետ համագործակցության արդյունքում **Իտալիայի Բոլոնիայի** համալսարանի ուսանողուհի Մարիկա Մուրջիոնին իր մագիստրոսական թեզի շրջանակներում իրականացվող աշխատանքները երկու ամիս շարունակել է ՇՊՀ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնում: Նրա թեման առնչվում էր Շիրվանզադեի «Նամուս» վեպին: ՇՊՀ-ի կողմից ցուցաբերած մասնագիտական աջակցության և արդյունավետ համագործակցության համար վերջերս Կենտրոնն ստացել է Մարիկայի գիտական ղեկավար՝ Բոլոնիայի համալսարանի Պատմության և մշակույթի ամբիոնի պրոֆեսոր Աննա Սիրինյանի շնորհակալական նամակը:

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հայտարարված «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանություն» ազգային դրամաշնորհային ծրագրի մրցույթին Կենտրոնը ներկայացրեց, շահեց և իրականացրեց **«Նշխարներ Շիրակի բանավոր մշակույթից»** եռամսյա ծրագիրը, որի արդյունքներն ամփոփվեցին 2022 թվականի սեպտեմբերի վերջին-

https://www.facebook.com/nshkharnershirakic/: Այդ ծրագրի շրջանակներում հավաքվեցին Շիրակի մշակութային արժեք ներկայացնող նշխարները և ամփոփվեցին «Նշխարներ Շիրակի բանավոր մշակույթից» ուղեցույցում https://drive.google.com/file/d/1KlwESRscuhWeRaA_YieL6e5wMQiiKRv3/view, իսկ ամփոփիչ աշխատաժողովի ժամանակ ՇՊՀ ռեկտոր Ե. Սերոբյանը, կարևորելով ծրագիրը և հատկապես դրա աշխատանքներում ՇՊՀ-ի ուսանողների ներգրավումը, շնորհակալագրեր հանձնեց ծրագրի աշխատանքներին կամավոր մասնակցած և աջակցած անձանց ու կազմակերպություններին- https://shsu.am/the-final-workshop-of-the-project-relics-from-the-verbal-culture-of-shirak-was-held/:

Տվերի հայկական համայնքը ներկայացնող «ԱՐԱՐԱՏ» ազգամշակութային ինքնավարության հետ քննարկվել և կնքվել է համագործակցության պայմանագիր, որով նախատեսվում է կրթական ու մարզամշակութային ոլորտներում գործընկերային հարաբերությունների հաստատումը, համագործակցության ծրագրերի իրականացումը https://shsu.am/%d5%b7%d5%ba%d5%b0-%d5%b6-%d6%87-%d5%bf%d5%be%d5%a5%d6%80%d5%ab-%d5%ba%d5%a5%d5%bf%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%b0%d5%a1%d5%b4%d5%a1%d5%ac%d5%bd%d5%a1%d6%80%d5%a1%d5%b6%d5%a8-%d5%b0%d5%a1%d5%b4%d5%a1/:

Նրանց է տրամադրվել «Նշխարներ Շիրակի բանավոր մշակույթից» ուղեցույցի էլեկտրոնային տարբերակը:

4. (3.4)	*Հասարակական պատասխանատվություն*	*4.1 (3.4.1) – Հասարակայնության հետ կապերի բարելավում և համալսարանի հեղինակության բարձրացում:*	*2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակ* *2026-2027 ուստարվա 2-րդ կիսամյակ* *I եռամսյակ 2023 - III եռամսյակ 2027*	➢ *Լավարկված և գործող ներքին իրավական ակտեր: Մասնավորապես՝-Հասարակայնության հետ կապերի ընթացակարգ», «Մարքեթինգային ռազմավարության հայեցակարգ»-2023-2027թթ.:* ➢ *Հանրային հաշվետվողականությունն ապահովող լավարկված և գործող ընթացակարգեր և մեխանիզմներ: Մասնավորապես՝* *ա/ օտարալեզու շահառուներին հասանելի ՇՊՀ-ի թարգմանված կայքէջ,* *բ/ արտաքին շահակիցների համար պարբերաբար իրականացվող վերապատրաստման դասընթացներ, մասնագիտական և այլ բնույթի խորհրդատվություններ և ծառայություններ-2023-2027թթ.:*
		4.2 (3.4.2) - Շահառուների ու շահակիցների վերլուծված և գնահատված կարիքների հիման վրա հետադարձ կապի ապահովման բարելավված ընթացակարգերի և մեխանիզմների մշակում ու ներդրում:	*2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակ* *2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակ* *I եռամսյակ 2023 - IV եռամսյակ 2023*	➢ *Հանրային հաշվետվողականությունն ապահովող լավարկված և գործող ընթացակարգեր և մեխանիզմներ-2023-2027թթ.:*

		4.4 (3.4.4) *- ՇՊՀ-ի ներգրավվածության ապահովում վարկանիշային համակարգերում:*	*2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակ 2026-2027 ուստարվա 2-րդ կիսամյակ* *I եռամսյակ 2023 - III եռամսյակ 2027*	➢ *Վարկանիշային առնվազն 2 համա-կարգերում դիրքի բարելավում-2023-2027թթ.:*

Նշենք, որ հաշվետու ժամանակահատվածում, առաջնորդվելով 2022թ. ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված համապատասխան դիտարկումներով ու առաջարկություններով, ինչպես նաև Կենտրոնի ամենամյա աշխատանքային ծրագրում նշված գործողությամբ՝ վերանայվել, լրամշակվել և բուհի գիտական խորհրդի կողմից հաստատվել են ՇՊՀ-ի հասարակայնության հետ կապերի ընթացակարգը- https://shsu.am/wp-content/uploads/2024/01/hasarakaynutyan-het-kaperi-yntacakarg.pdf , ՇՊՀ-ի մարքեթինգային ռազմավարության հայեցակարգը-https://shsu.am/wp-content/uploads/2024/01/marqetingayin-razmavarutyan-hayecakarg.pdf: Այս աշխատանքների իրականացման ժամանակ հաշվի են առնվել նաև բուհի կայքէջից և սոցիալական ցանցերից օգտվող արտաքին շահառուների շրջանում անցկացված հարցման արդյունքները, կատարված դիտարկումներն ու առաջարկությունները: Մասնավորապես՝ Հասարակայնության հետ կապերի ընթացակարգում ավելացվել է առանձին բաժին՝ «Շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովող գործիքակազմ» վերնագրով:

Իսկ Մարքեթինգային ռազմավարության հայեցակարգում վերաձևակերպվել է Նպատակ 1-ը՝ առավել ներդաշնակեցվելով բուհի ՌԾ-ով սահմանված նպատակներին ու խնդիրներին: Ինչպես նաև այս բաժնում ավելացվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել կրթական շուկայի կարիքները, մասնավորապես՝ Շիրակի մարզում,
- Ուսումնասիրել ՇՊՀ-ի դիմորդների ընդհանուր բնութագրերը՝ կրթական հաստատություն, բնակության վայր, նախասիրություն, տարիք, սեռ,
- Բենչմարքինգի իրականացման նպատակով ուսումնասիրել այլ համալսարանների փորձը,
- Ուսումնասիրել կրթական գործընթացի ռիսկերը, մշակել դրանց գնահատման և կառավարման գործիքակազմը:

Իսկ գիտահետազոտական գործունեության բարելավման նպատակով ավելացվել է հետևյալ խնդիրը՝ «Հրավիրյալ դասախոսներին

առաջարկել գիտական սեմինարներ անցկացնել իրենց մասնագիտության շրջանակներում»:

Այս հայեցակարգում, առաջնորդվելով ՇՊՀ-ի ՌԾ-ի հիմնադրույթներով, սահմանված մյուս գերակայության՝ բուհի միջազգային տեսանելիության բարձման համար ավելացվել են հետևյալ խնդիրները.

- Բենչմարքինգի անցկացման արդյունքում բարելավել բուհի գործունեության հիմնական ոլորտների աշխատանքները,
- Ուսումնասիրել համալսարանի միջազգայնացման ուղղությունների համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը,
- Ընդլայնել այլ բուհերի հետ համագործակցության շրջանակը, մասնավորապես՝ համատեղ դրամաշնորհային ծրագրերի, հետազոտությունների և ԿԾ-ների իրականացման ոլորտներում,
- Ապահովել բուհի ներգրավվածությունը վարկանիշավորման տարբեր համակարգերում:

Մարքեթինգային գործիքների բարելավման ու ներդրման նպատակով ևս լրամշակումներն ուղղված են բուհի ՌԾ-ով, Կենտրոնի աշխատանքային ծրագրերով նախանշված աշխատանքների իրականացմանն ու սահմանված խնդիրների լուծմանը: Մասնավորապես՝ ավելացվել են հետևյալ խնդիրները.

- Ներգրավել ուսանող կամավորներ, ովքեր կաջակցեն թարմացնել ՇՊՀ-ի կայքում տեղադրված ռուսերենով և անգլերենով տեղեկատվությունները, ինչպես նաև նրանց տալ տեղեկանք, որը թույլ կտա ապագայում, որպես առավելություն ներկայացնել ուսանողների վարկանիշավորման մրցույթին մասնակցելու դեպքում,
- Պարբերաբար մամլո ասուլիսով ներկայանան ռեկտորը, պրոռեկտորները, դեկանները և ամբիոնի վարիչները և դրանք տեղադրվեն YouTube էջում և պաշտոնական կայքէջում, որի ընթացքում նրանք կներկայացնեն համալսարանում իրենց ղեկավարած ստորաբաժանման ընթացիկ գործունեությունը և նոր ձեռքբերումները:

Հաշվետու՝ 2022-2023 ուստարում Կենտրոնի կողմից աշխատանքներ են տարվել հասարակայնության հետ կապերի և լրատվության ուղղությամբ՝ ապահովելու համալսարանի հաշվետվողականությունը պետության և հասարակության առջև:

Ըստ ՇՊՀ-ի Արտաքին համագործակցության կենտրոնի կանոնադրության, Կենտրոնն ապահովում է բուհի գործունեության մասին տեղեկատվության տարածումը հասարակության լայն շրջաններում, ինչպես նաև դրական հասարակական կարծիքի և բարձր վարկանիշի ձևավորման ուղղությամբ իրականացվող աշխատանքների կազմակերպումը: Վերոնշյալ աշխատանքները կազմակերպվում են հասարակայնության հետ կապերի և լրատվության ոլորտի մասնագետների կողմից՝ համապատասխան մեդիագործիքների և տեխնիկա-սարքավորումների միջոցով:

Կենտրոնն ստեղծել է արտաքին շահառուների հետ կապի ամրապնդման և նրանց հուզող հարցերին սպառիչ պատասխան տալու համար անհրաժեշտ հնարավորությունները: Կենտրոնն առցանց գործիքակազմի արդյունավետ կիրառմամբ օպերատիվ կապ է ապահովել արտաքին ու ներքին շահառուների և համալսարանի համապատասխան մասնագետների միջև:

Համալսարանի գործունեության մասին տեղեկատվությունն առավելագույնս հասանելի ու թափանցիկ ներկայացվել է հայտարարությունների, ֆոտո և տեսառեպորտաժների ձևաչափով:

Հաշվետու տարում հասարակայնության հետ կապերի ու լրատվության ուղղությամբ աշխատանքներն ընթացել են ներքին և արտաքին հաղորդակցության, ՇՊՀ-ին վերաբերող հրապարակումների վերլուծության, բուհի վարկանիշի բարձրացման, սեփական տեսանյութերի պատրաստման և հեռարձակման, համացանցային տիրույթում ՇՊՀ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածման, սոցիալական ցանցերում ՇՊՀ-ի էջերի վարման ու համապատասխան տեղեկատվության տարածման և մի շարք այլ ուղղություններով:

ՇՊՀ-ի մշակութային, սոցիալական ու գիտակրթական գործունեությունը, անցուդարձը, ոլորտի բարեփոխումներն ու այդ ուղղությամբ իրականացվող ծրագրերը հասարակությանը հասանելի են դարձել հիմնականում ֆոտոռեպորտաժների, տեղեկատվական գրառումների և հոդվածների միջոցով: Անդրադարձ է կատարվել նաև ՇՊՀ դպրոցի և ՇՊՀ քոլեջի աշխատանքների ու միջոցառումների լուսաբանմանը:

Հաշվետու ուստարում բուհի պաշտոնական կայքէջում և սոցիարթակներում ֆոտոռեպորտաժների և հոդվածների ձևաչափով լուսաբանվել է բուհական կյանքն արտացոլող շուրջ 250 միջոցառում:

Կենտրոնի աշխատակիցները 2022-2023 ուստարվա ընթացքում մասնակցել են նաև մասնագիտական կողմնորոշման նպատակով Շիրակի մարզի դպրոցներում անցկացված հանդիպումներին, ինչպես նաև ՇՊՀ-ում կազմակերպված «Բաց դռների օր» և «Ամառային դպրոց» նախաձեռնություններին՝ ապահովելով նաև դրանց լուսաբանումը-http://surl.li/oxnpj, http://surl.li/oxnqk, https://shsu.am/add-0307-03/:

Հաշվետու ուստարվա ընթացքում ընդունելության մասին հայտարարություններն առավել մեծ լսարանի հասանելի դարձնելու համար դրանք հեռարձակվել են նաև մարզային հեռուստատեսությամբ:

Կենտրոնի աշխատանքային ծրագրում, որպես հասարակական պատասխանատվության կատարողականի ցուցիչ, նշված է նաև, որ Կենտրոնը պիտի ապահովի օտարալեզու շահառուներին ու շահակիցներին հասանելի թարգմանված պաշտոնական կայքէջ, ինչպես նաև արտաքին շահառուների համար պարբերաբար իրականացնի վերապատրաստման դասընթացներ, մասնագիտական և այլ բնույթի խորհրդատվություններ ու ծառայություններ: Այս աշխատանքները, պայմանավորված իրենց առանձնահատկություններով և հասարակական պահանջարկի առկայությամբ, ըստ էության, շարունակական բնույթ են կրում և իրականացվում են պարբերաբար:

Մասնավորապես՝ հաշվետու ժամանակահատվածում կայքէջում ռուսերեն թարգմանվել է ավելի քան 15 տեղեկատվություն (հայտարարություններ) և շուրջ 35 էջ, իսկ անգլերեն՝ ավելի քան 35 տեղեկատվություն (հայտարարություններ) և ավելի քան 140 էջ:

2022-2023 ուստարում կայքէջում հայերենով տեղադրվել են ավելի քան 400 էջ տեղեկատվություն (հայտարարություններ) և շուրջ 150 նոր ստեղծված էջեր:

2022-2023 ուստարում ՇՊՀ-ի էլեկտրոնային գրադարանի կայքում տեղադրվել է 10 էլեկտրոնային գիրք-https://library.shsu.am/:



Այս աշխատանքների արդյունավետությունը պայմանավորող հիմնական գործոններից մեկն այն է, որ, շարունակելով այլևս իրեն արդարացրած մոտեցումը, ՇՊՀ-ի Թարգմանչական գործ մասնագիտության ուսանողների մի մասը մասնագիտական պրակտիկան անցկացնում է Կենտրոնում, որտեղ ուսանող-պրակտիկանտներն ու իրենց ղեկավար դասախոսներն իրականացնում են Կենտրոնի համապատասխան աշխատակիցների կողմից առանձնացված՝ առաջնահերթ ներկայացման անհրաժեշտություն ունեցող նյութերի թարգմանությունը: Այս աշխատանքների արդյունավետությանը էապես նպաստում է նաև Կենտրոնի աշխատանքներին աջակցող կամավոր-ուսանողների խումբը: Ինչպես նրանք, այնպես էլ Գյումրիում գործող «Դեպի Հայք» կազմակերպության կամավորների հետ համագործակցության շրջանակներում Կենտրոնը փորձում է ապահովել նաև իր աշխատանքային ծրագրում ամրագրված այն դրույթը, որ պետք է ձևավորվի և խթանվի կամավորության մշակույթը- https://shsu.am/%d5%a4%d5%a5%d5%ba%d5%ab-%d5%b0%d5%a1%d5%b5%d6%84-%d5%ab-%d5%af%d5%a1%d5%b4%d5%a1%d5%be%d5%b8%d6%80%d5%a8-%d5%b7%d5%ba%d5%b0-%d5%b8%d6%82%d5%b4-%d6%86%d6%80%d5%a1%d5%b6%d5%bd%d5%a5%d6%80/:

Վերը նշված աշխատանքների իրականացումը հնարավորություն կտա Կենտրոնին առաջիկայում մշակելու և առաջարկելու կամավորությունը կանոնակարգող ու խրախուսող ընթացակարգ ու մեխանիզմներ:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակել են ակտիվ գործել համալսարանի պաշտոնական էջերը սոցիալական կայքերում՝ Facebook, Instagram, YouTube, ներկայացնելով կրթական, գիտական և մշակութային անցուդարձը, ներքին և արտաքին շահառուների համար նախատեսված տեղեկատվությունը, իսկ ՇՊՀ-ի Telegram հարթակում, ալիքի առանձնահատկություններով պայմանավորված, տեղադրվում են միայն հայտարարություններ:

Հաշվետու ուստարում զգալի թվով ավելացել է նաև սոցիալական կայքերում հետևորդների թիվը. Facebook - 9900 հավանում և 11 000 հետևորդ, Instagram – 3905 հետևորդ, YouTube- 458 հետևորդ, Telegram- 120 հետևորդ:

ՇՊՀ գործընթացների հասանելիությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով համալսարանում տեղի ունեցող հանդիպումները, գիտական սեմինարները, միջոցառումները լուսաբանվում են համալսարանի պաշտոնական կայքէջի «Նորություններ» բաժնում և սոցիալական ցանցերի էջերում: Առկա և հեռակա ուսուցման համակարգերի, մագիստրատուրայի և հետբուհական կրթական ծրագրերով դիմորդների համար ՇՊՀ պաշտոնական կայքէջում առանձնացված է «Դիմորդ» պատուհանը, որտեղ ընդունելության գործընթացի վերաբերյալ տեղադրվում է համապատասխան տեղեկատվություն:

ՇՊՀ-ի Արտաքին համագործակցության կենտրոնը, համաձայն Կենտրոնի կանոնադրությամբ և Հասարակայնության հետ կապերի ընթացակարգով-https://shsu.am/wp-content/uploads/2024/01/hasarakaynutyan-het-kaperi-yntacakarg.pdf սահմանված գործառույթների, ապահովում է հասարակության հետ հետադարձ կապը, որն իրականացվում է տարբեր մեխանիզմներով: Մասնավորապես՝ ՇՊՀ-ի պաշտոնական կայքէջում առկա «Կապ» մենյուի (https://shsu.am/contact/) և համալսարանի սոցիալական ցանցերի էջերին ստացված հաղորդագրությունների միջոցով:

Հետադարձ կապի ապահովման, ինչպես նաև բաց ու թափանցիկ աշխատառճի կիրառման արդյունավետ մեխանիզմներից մեկն էլ հաշվետու ժամանակահատվածում բուհի պաշտոնական կայքէջում ստեղծված «Նախագծերի քննարկում» պատուհանն է, որտեղ գիտխորհրդի կողմից հաստատման ենթակա փաստաթղթերի վերաբերյալ բուհի արտաքին և ներքին շահակիցները կարող են ներկայացնել իրենց դիտարկումներն ու առաջարկությունները: 2022-2023 ուստարվա ընթացքում այդ պատուհանում տեղադրվել է շուրջ 10 փաստաթուղթ:

Հասարակությանը հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետությունը պարզելու նպատակով, ինչպես նաև հետադարձ կապի ապահովման ընթացակարգերի և մեխանիզմների լավարկման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Կենտրոնի կողմից անցկացվել է առցանց հարցում, որի արդյունքները համապատասխան գծապատկերների միջոցով ներկայացված են ստորև.

Հարց. Արդյո՞ք պարբերաբար հետևում եք ՇՊՀ կայքէջին և սոցցանցերին:



Հարց. Ո՞ր հարթակին եք նախապատվություն տալիս:



Հարց. Ո՞ր հարթակն եք օգտագործում ձեզ հուզող հարցերը հղելու համար:



Հարց. Գո՞հ եք արդյոք մեր հետադարձ կապից:



Հարցումների արդյունքներից պարզ է դառնում, որ հարցվածների 60%-ից ավելին պարբերաբար հետևում է ՇՊՀ-ի կայքէջին և սոցցանցերին՝ նախապատվությունը տալով Facebook սոցիալական հարթակին: Հարցերը հիմնականում ուղղվում են Facebook սոցիալական ցանցի միջոցով, և հարցվածների 86,7 %-ը գոհ է հետադարձ կապից: Հետադարձ կապից դժգոհ 13,3% շահառուները, ըստ էության, առաջարկվող պատասխաններից որևէ մեկը չեն ընտրել՝ նշելով միայն «Այլ» տարբերակը:



Հետադարձ կապի՝ վերը նշված մեխանիզմից ներքին և արտաքին շահառուների բավարարվածությունը կամ դժգոհությունը պարզելու նպատակով Կենտրոնի կողմից պարբերաբար հարցումներ են ուղարկվում շահառուներին։

Ստորև ներկայացնում ենք նաև Instagram սոցկայքում արված հարցումների արդյունքները։

1. Հարցվածներից այս հարցին պատասխանել է 222 հետևորդ։


Արդյո՞ք պարբերաբար հետևում եք ԾՊՀ-ի կայքէջին եվ սոցցանցերին
100%
90%
80%
70%
60%
50%
40%
30%
20%
10%
0%
91%
9%
Այո
Ոչ

2. Հարցվածներից այս հարցին պատասխանել է 157 հետևորդ։



Ճշգրտող հարցին, թե մասնավորապես ինչի՞ց են դժգոհ, ընդամենը 3 մասնակից է պատասխանել.

- Արագ չեն արձագանքում-2 հետևորդ

- Պատասխանները սպառիչ չեն-1 հետևորդ:



Սոցցանցերի էջերում գրանցված ցուցանիշներ

Գրառումների քանակ-407

Ամենաշատ դիտումներ ունեցող տեսանյութ-36 300

Լուսաբանված նյութերի հասանելիություն-551 200

Գրառումների քանակ-253

Սթորի բաժնում անցկացված հարցումների քանակ-7

Լուսաբանված նյութերի հասանելիություն-87 500

Առաջնորդվելով Կենտրոնի ամենամյա աշխատանքային ծրագրի դրույթներով, ինչպես նաև 2022թ. ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված դիտարկումներով ու առաջարկություններով՝ Կենտրոնը համապատասխան աշխատանքներ է իրականացնում շարունակական դարձնելու վերջին տարիներին արտաքին շահառուների համար հաջողությամբ իրականացվող վերապատրաստման դասընթացները: Մասնավորապես՝ կարևորելով հասարակության լայն շերտերի համար լրացուցիչ կրթական/վերապատրաստման ծրագրերի իրականացումը և հաշվի առնելով, այն փաստը, որ ՇՊՀ-ն, բացի համալսարանական մասնագիտություններից, թողարկում է նաև մանկավարժի որակավորմամբ մասնագիտություններ, բուհն իր առաջնահերթություններից է համարել իրականացնել նաև հանրակրթական դպրոցների տնօրենների, ուսուցիչների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների և դաստիարակների վերապատրաստումներ: Հավելենք, որ 2023-ին ՇՊՀ-ն մասնակցել և ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից երաշխավորվել է որպես կամավոր ատեստավորման ժամանակ 0-59% հավաքած ուսուցիչների վերապատրաստումներ իրականացնող կազմակերպություն և 2023 թվականի հուլիսի 3-ից մինչև հուլիսի 21-ը կազմակերպել ու անցկացրել է Շիրակի և այլ մարզերի՝ այդ ուսուցիչների առարկայական վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել է 74 ուսուցիչ - (http://surl.li/oxmbd): Իսկ 2023 թվականի հուլիսի 31-ից մինչև օգոստոսի 25-ը անցկացվել է մարզի հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչների պարտադիր վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել է շուրջ 120 ուսուցիչ - (shsu.am):https://shsu.am/add-0908/, https://shsu.am/add-3107-01/:

Դասընթացների ավարտին մասնակիցներին շնորհվել են համապատասխան վկայականներ– https://shsu.am/add-11-10-01/:

Կատարված աշխատանքների արդյունավետության բարձրացման հարցում կարևորելով մասնակից-շահառուների կարծիքներն ու առաջարկությունները՝ Կենտրոնն անցկացնում է համապատասխան հարցումներ և դրանց արդյունքների վերլուծություն:

Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնը փորձել է ապահովել ՇՊՀ-ի մասնակցությունը որևէ վարկանիշավորման համակարգում, այդ նպատակով համապատասխան նամակներ է ուղարկել վարկանիշավորում իրականացնող **«MosIUR-The Three University Missions»** կազմակերպությանը, սակայն առայժմ գործնական որևէ առաջարկություն չենք ստացել:

Այժմ համագործակցության աշխատանքներ են իրականացվում **HE Higher Education Ranking** կազմակերպության հետ, մասնավորապես՝ լրացվել և ուղարկվել է նրանց կողմից տրամադրված հարցաթերթիկը, որտեղ բավականին ծավալուն տեղեկատվություն է մուտքագրվել բուհի գործունեության բոլոր ոլորտների վերաբերյալ:

Թերությունների վերացման գործողությունների ծրագրի կատարողական

Հասարակական պատասխանատվություն

N	Ակնկալվող արդյունքը	Նախատեսվող միջանկյալ արդյունքները	Գործողության իրականացման ժամանակա-հատվածը	Կատարողականի ցուցիչ
1. (8.1)	Հասարակայնության հետ կապերի բարելավում	**1.1 (8.1.1)** - Լավարկված և գործող ներքին իրավական ակտեր, մասնավորապես՝ ➢ «Հասարակայնության հետ կապերի ընթացակարգ», ➢ «Մարքեթինգային ռազմավարության հայեցակարգ»:	Հունիս 2023	ԳԽ-ի կողմից հաստատված՝ համապատասխան ներքին իրավական ակտեր:
2. (8.2)	Հետադարձ կապի ապահովման բարելավված և կիրարկված ընթացակարգեր և մեխանիզմներ	**2.1 (8.2.1)** - Արտաքին շահակիցների՝ վերլուծված և գնահատված կարիքներ:	Հունվար 2023	Հանձնաժողովի կողմից վեր հանված և վերլուծված կարիքներ:
Վերոնշյալ հարցերին առնչվող նյութը ներկայացված է Աղյուսակ 1.1-ի կետ 4-ի ենթակետեր 4.1-ում և 4.2-ում: Տե՛ս նաև էջեր 12-24:				

ԹՎԳԾ-Ի ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ
Արտաքին կապեր եվ միջազգայնացում

N	Ակնկալվող արդյունքը	Նախատեսվող միջանկյալ արդյունքները	Գործողության իրականացման ժամանակա-հատվածը	Կատարողականի ցուցիչ
1. (9.1)	ՇՊՀ-ի արտաքին համագոր-ծակցության և միջազգայ-նացման մշակված և կի-րարկվող հայեցակարգ և մեխանիզմներ	**1.1 (9.1.1)** - ՇՊՀ-ի արտաքին համագործակցության և միջազգայնացման հստակեցված ուղղություններ ու ոլորտներ՝ ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգային համագործակցության ներկայիս կարողությունների գնահատմամբ:	Հունվար-մարտ 2023	ԳԽ-ի կողմից հաստատված՝ համապա-տասխան ներքին իրավական ակտեր:
Վերոնշյալ հարցերին առնչվող նյութը ներկայացված է Աղյուսակ 1.1-ի կետ 3-ի ենթակետեր 3.1-ում և 3.2-ում: Տե՛ս նաև էջեր 8-10:				

3. ԿԵՆՏՐՈՆԻ ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Կենտրոնը մասնակցել և համակարգել է ՇՊՀ-ում 2022-2023 ուստարում Եվրամիության Էրազմուս+ ծրագրի շրջանակներում իրականացված՝ բուհերի կարողությունների զարգացմանը միտված (KA-2) երկու ծրագիր՝ *WBL4JOB և SMARTI:*

3.1.1. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ - WBL4JOB ԾՐԱԳԻՐ (2021-2024թ.թ.)

3.1.2. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՎ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ, ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱՋՄԻ ԿԻՐԱՌՄԱՆԸ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ – SMARTI ԾՐԱԳԻՐ (2021-2025թ.թ.)

3.1.1. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

(2020-2024թթ.)

Ծրագրի նպատակն է.

Կրթական քաղաքականության, իրավական դաշտի և դուալ բարձրագույն կրթության (ԴԲԿ) ընդհանրական ու ճկուն մոդելի մշակման և ներդրման միջոցով խթանել ձեռնարկությունների ու բուհերի միջև համագործակցությունը, բարձրացնել շրջանավարտների աշխատունակությունն ու մրցունակությունը՝ վերջնական նպատակ ունենալով ներդնել աշխատանքի վրա հիմնված ուսումնառությունը (ԱՀՈՒ) Հայաստանում և Մոլդովայում - Home (wbl4job.com):

Այս նպատակի իրականացման համար նախատեսվում է անցկացնել մասնակից կազմակերպությունների աշխատակիցների վերապատրաստումներ ՀՀ և արտասահմանյան գործընկեր համալսարաններում, ինչպես նաև անհրաժեշտ համակարգչային գույքի ձեռքբերում - https://bit.ly/3W74CEB, https://bit.ly/3jYtfG3:

Որպես WBL4JOB ծրագրի երկարաժամկետ վերջնարդյունքներ՝ նախատեսվում է ունենալ հետևյալը.

- ✓ ԱՀՈՒ/ԴԲԿ քաղաքականության և իրականացման գործիքակազմ,
- ✓ ԱՀՈՒ/ԴԲԿ քաղաքականության, կառուցակարգերի և գործիքների գծով վերապատրաստված անձնակազմ,

- ✓ ԱՀՈՒ/ԴԲԿ շրջանակում դասավանդման և ուսումնառության գծով վերապատրաստված դասախոսական անձնակազմ/մենտոր,
- ✓ Բարձրագույն կրթության համակարգերում ԱՀՈՒ/ԴԲԿ-ի ներդրմանն անհրաժեշտ ազգային քաղաքականություն,
- ✓ ԱՀՈՒ/դուալ բարձրագույն կրթության ընդհանրական ու ճկուն մոդել,
- ✓ ԱՀՈՒ/ԴԲԿ ներդրմանն անհրաժեշտ փոփոխություններ ազգային օրենսդրություններում,
- ✓ Համակարգչային տեխնիկա ու սարքավորումներ՝ մասնակից 4 համալսարանների համար,
- ✓ Համագործակցության համաձայնագրեր՝ ծրագրի իրականացման ավարտից հետո:

Այս ծրագրի աշխատանքային փաթեթներով նախատեսված գործողությունների մի մասն իրականացվել ու ներկայացվել է նախորդ՝ 2021-2022 ուստարվա հաշվետվության մեջ - https://shsu.am/wp-content/uploads/2023/11/AHK-hashvetvutyun-2021-2022.pdf .

Հաշվետու այս ժամանակահատվածն առանձնանում է նրանով, որ ՇՊՀ-ում «Կառավարում (ըստ ոլորտի)» մասնագիտության բակալավրի չորրորդ կուրսի ուսանողների համար կազմակերպվեց և անցկացվեց ԱՀՈՒ/ԴԲԿ՝ ըստ բուհի գիտական խորհրդի կողմից հաստատված ուղեցույցի- https://shsu.am/wp-content/uploads/2022/10/WbL_GUIDE.pdf : Նշենք, որ այս ծրագիրը հնարավորություն տվեց ՇՊՀ-ին ընդլայնել ու բազմազանեցնել գործատուների հետ համագործակցության շրջանակներն ու ձևաչափը՝ նրանց ներգրավելով վերոնշյալ մասնագիտության ուսումնական պլանի լրամշակման և ԱՀՈՒ-ի պահանջներին համապատասխանեցնելու աշխատանքներում: Քանի որ ԱՀՈՒ-ի իրականացման ընթացքում ՇՊՀ-ի ուսանողների կարգավիճակը հավասարեցվելու էր աշխատակիցների կարգավիճակին, ուստի ԱԿԲԱ, ԱյԴի, Ինեկո բանկերի՝ Գյումրիում գործող մասնաճյուղերի ներկայացուցիչների կողմից մշակվեցին ուսանողների ընտրության չափանիշներն ու ընթացակարգը, որոնց համապատասխանող ինն ուսանողներ իրավունք ստացան մասնակցելու ԱՀՈՒ-ի փորձարկման (պիլոտային) ծրագրի աշխատանքներին: Ըստ ուղեցույցի պահանջների՝ նրանց հետ կնքվեցին եռակողմ պայմանագիր, և ուսանողներն իրենց ԱՀՈՒ-ն չորս ամիս տևողությամբ անցկացրեցին վերոնշյալ բանկերում՝ այդ ընթացքում ստանալով աշխատավարձ: Ավելացնենք նաև, որ շնորհիվ ԱՀՈՒ-ի բանկերը հնարավորություն ստացան իրենց ապագա

աշխատակիցներին ծանոթանալ դեռևս նրանց ուսումնառության ընթացքում, ինչի շնորհիվ այժմ ՇՊՀ-ի հինգ ուսանողներ հրավեր ստացան և աշխատում են հենց այն բանկերում, որտեղ իրենք անցկացրեցին ԱՀՈՒ-ն:

Այս աշխատանքների արդյունավետությանը նպաստող գործոններից մեկն ինչպես ծրագրի համակարգող՝ Հայաստանում ֆրանսիական համալսարանի, այնպես էլ եվրոպական գործընկեր համալսարանների համապատասխան մասնագետների կողմից պարբերաբար անցկացվող վերապատրաստումները, աշխատաժողովներն էին առցանց կամ առկա ձևաչափերով- http://surl.li/pjbrk:

Իսկ 2023թ. հունիսին ՇՊՀ-ի երկու աշխատակիցներ մասնակցեցին Ավստրիայի Կրեմսի համալսարանում անցկացված եռօրյա վերապատրաստմանը:

Դրանց ընթացքում ներկայացվում էին ԱՀՈՒ-ի ոլորտի դրական փորձը, դրա ներդրման ու կիրառման առանձնահատկությունները, անհրաժեշտ խորհրդատվություն, ինչը հնարավորություն տվեց ՇՊՀ-ին՝ ԱՀՈՒ-ն կազմակերպել և իրականացնել նախանշված չափանիշներին ու չափորոշիչներին համապատասխան ու պատշաճ կերպով: Դա է հաստատում 2023թ. մայիսին միջազգային փորձագետի կողմից ՇՊՀ-ում անցկացված WBL4JOB ծրագրի, ի մասնավորի՝ այդ ժամանակ արդեն իրականացված ԱՀՈՒ-ի հերթական մշտադիտարկումը ծրագրի համակարգող՝ Հայաստանում ֆրանսիական համալսարանի, ՇՊՀ-ի աշխատակիցների, ուսանողների և բանկերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Կատարված աշխատանքները փորձագետի կողմից բարձր գնահատականի արժանացան - https://shsu.am/add-1905-02/:

Այս ոլորտում իրականացված աշխատանքների արդյունքում անձնական/անհատական և ինստիտուցիոնալ մակարդակներում կատարված փոփոխություններին և ազդեցությանը կարելի է ծանոթանալ հետևյալ հղումներով՝ ինչպես ՇՊՀ-ի պատրաստած տեսաֆիլմում- https://www.youtube.com/watch?v=YkHc5ZnJ4MI, այնպես էլ՝ նախորդ հաշվետվության էջ 10-11-ում https://shsu.am/wp-content/uploads/2023/11/AHK-hashvetvutyun-2021-2022.pdf:

3.1.2. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՎ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ, ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԿԻՐԱՌՄԱՆԸ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

(2020-2025թ.թ.)

Ծրագրի նպատակն է.

- Ուսումնասիրել անգլերենով ակադեմիական դասավանդման (EMI-English Medium Instruction) եվրոպական լավագույն փորձը և անգլերենով դասավանդող (EMI) աշխատակազմի կարողությունների զարգացումը:
- Եվրոպական գործընկեր համալսարանները մշակելու և վարելու են անգլերենով դասավանդող (EMI) աշխատակազմի մանկավարժական թրեյնինգների մոդուլներ՝ վերապատրաստվող դասախոսների, ուսանողների և աշխատակազմի համար՝ օգտագործելով ECTS մոդուլային շրջանակը:
- Մշակվելու է EMI դասավանդման ուղեցույց՝ համալսարանների օգտագործման համար - https://smarti-erasmus.eu/:

Այս նպատակի իրականացման համար նախատեսվում է անցկացնել մասնակից կազմակերպությունների աշխատակիցների վերապատրաստումներ ՀՀ և արտասահմանյան գործընկեր համալսարաններում, ինչպես նաև անհրաժեշտ համակարգչային գույքի, սարքավորումների ու գրականության ձեռքբերում - https://bit.ly/3CHhdHz:

Ակնկալվող վերջնարդյունքներն են.

- «Անգլերենը որպես դասավանդման միջոց» (EMI) վերապատրաստման կենտրոնի և անգլերենի մակարդակի ստուգման թեստերի միասնական ցանցի, անգլերենը հատուկ նպատակների համար (ESP) վերապատրաստման, ՊԴ կազմի վերապատրաստման մոդուլների առկայություն,
- «Անգլերենը որպես դասավանդման միջոց» (EMI) ուսումնական ձեռնարկ,
- Առցանց հարթակ՝ ծրագրի վերջնարդյունքները տարածելու և ծրագրի շարունակականությունն ապահովելու նպատակով,
- EMI կենտրոնների ցանց,
- EMI անհատական ծրագրեր ՊԴ կազմերի և վերապատրաստողների ներբուհական վերապատրաստումների համար,
- EMI կիրառող դասախոսների վերապատրաստման ծրագիր,
- EMI հավատարմագրման և շարունակականության ծրագրի առկայություն և իրագործում:

Հաշվետու ժամանակահատվածում այս ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքներն իրականացվել են Կենտրոնի համակարգմամբ՝ ըստ համապատասխան աշխատանքային փաթեթների ու ժամանակացույցի:

Աշխատանքների կատարման արդյունավետության ապահովման հարցում կարևորելով համապատասխան վերապատրաստումները, ինչպես նաև գործընկեր համալսարանների դրական փորձին ծանոթանալը և դրա տեղայնացման ու ՇՊՀ-ում ներդրման աշխատանքները՝ հաշվետու ժամանակահատվածում բուհի երկու աշխատակիցներ մասնակցեցին Լիվերպուլի գործընկեր համալսարանում անցկացված տասնօրյա վերապատրաստմանը: Իսկ վերադառնալուց հետո, որպես ՇՊՀ-ում պարբերաբար ու հետևողականորեն անցկացվող հաշվետվության և վերապատրաստման նյութերի տարածման ու հանրայնացման ձև, նրանք բուհի աշխատակիցներին և ուսանողներին ներկայացրին իրենց ձեռք բերած նոր գիտելիքները, փորձն ու տպավորությունները- https://shsu.am/add-2704-03/:

Իրականացվող աշխատանքների արդյունավետության ապահովման տեսակետից առանձնակի նշանակություն ունեն ծրագրի շրջանակներում անցկացվող մշտադիտարկումներն ինչպես համապատասխան տեղական ու միջազգային փորձագետների, այնպես էլ համակարգողների կողմից: Այդ նպատակն էր հետապնդում ծրագրի համակարգող՝ Դրեզդենի համալսարանի պրոֆեսոր Ջերարդ Քալնի և նույն համալսարանի աշխատակից Կատյա Ուլմանի աշխատանքային այցելությունը ՇՊՀ 2022թ. սեպտեմբերին, որի ընթացքում նրանք հանդիպում ունեցան բուհի ղեկավարության, ծրագրի աշխատանքային թիմի ներկայացուցիչների հետ- http://surl.li/pjbsd:

Ջերարդ Քալնն անդրադարձավ ծրագրի ընթացքին, մասնավորապես՝ նա նշեց, որ, պայմանավորված համավարակի արդյունքում ստեղծված իրավիճակով, ծրագրի վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2025 թվականը: Այս առումով քննարկվեցին և հաստատվեցին նոր աշխատանքային պլանն ու ժամանակացույցը:

Հանդիպման ավարտին աշխատանքային խմբի կողմից ներկայացվեցին ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքները, որից հետո Ջերարդ Քալնը պատասխանեց նրանց հարցերին: Հյուրերը ծրագրի շրջանակներում ՇՊՀ-ում իրականացված աշխատանքները դրական գնահատեցին:

3.2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

3.2.1. ՎԱԼԼԱԴՈԼԻԴԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԻՍՊԱՆԻԱ, 2017-2019թթ., 2020-2023թ.թ.)

Ծրագրի նպատակն է.

Գործընկեր բուհեր հանդիսացող **Իսպանիայի Վալլադոլիդի համալսարանի և ՇՊՀ-ի** ուսանողների, պրոֆեսորադասախոսական ու վարչական կազմի ակադեմիական շարժունության և փոխանակումների կազմակերպումն ու անցկացումը:

Ուսանողները (բակալավրի, մագիստրատուրայի, հետբուհական կրթության) հյուրընկալող համալսարանում կարող են ուսումնառությունը շարունակել մեկ կիսամյակ (մինչև 5 ամիս), իսկ պրոֆեսորադասախոսական և վարչական կազմը՝ դասավանդել կամ մասնակցել վերապատրաստումների 5 աշխատանքային օր:

Ծրագիրն ամբողջությամբ փոխհատուցում է շարժունության ընթացքում իրականացվող ծախսերը:

Հաշվետու ժամանակահատվածում Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի 3-րդ կուրսի մեկ ուսանողուհի մրցույթի արդյունքում ընտրվել և 5 ամսով իր ուսումնառությունը շարունակել է Վալլադոլիդի համալսարանում: Վերդառնալուց հետո նա ներկայացրել է հրապարակային հաշվետություն կատարած աշխատանքների մասին-

https://shsu.am/erasmus-report-day/: Այս ձևաչափով աշխատաժողովները ՇՊՀ-ում արդեն դարձել են ավանդական, որոնց մասնակցում են ոչ միայն ներքին, այլև արտաքին շահառուները, ինչպես նաև այլ բուհերի և ավագ դպրոցների աշակերտները:

Նշենք նաև, որ հաշվետու ժամանակահատվածում այս համալսարանի հետ վերակնքվել է համագործակցության նոր պայմանագիր, ինչը, կարծում ենք, հաստատում է այն իրողությունը, որ ՇՊՀ-ն վստահելի գործընկեր է միջազգային համագործակցության շրջանակներում- (https://shsu.am/wp-content/uploads/2024/01/Agreement-Valladolid-2023-2026.pdf):

Ինչպես արտագնա, այնպես էլ ներգնա շարժունության մասնակիցների հետ Կենտրոնը պարբերաբար համապատասխան իրազեկող, աջակցող ու խորհրդատվական աշխատանքներ է իրականացնում, որպեսզի նրանք ներկայանան նաև որպես ՇՊՀ-ի դեսպաններ հյուրընկալող համալսարաններում՝ փորձելով համագործակցության նոր ոլորտներ ու կապեր հաստատել, նպաստել ՇՊՀ-ի տեսանելիության ու միջազգայնացման բարձրացմանը:

3.2.2. ԳՐԱՆԱԴԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԻՍՊԱՆԻԱ, 2020-2023թթ.)

Ծրագրի նպատակն է.

Գործընկեր բուհեր հանդիսացող **Իսպանիայի Գրանադայի համալսարանի և ՇՊՀ-ի** ուսանողների, պրոֆեսորադասախոսական ու վարչական կազմի ակադեմիական շարժունության և փոխանակումների կազմակերպումն ու անցկացումը:

Ուսանողները (բակալավրի, մագիստրատուրայի, հետբուհական կրթության) հյուրընկալող համալսարանում կարող են ուսումնառությունը շարունակել մեկ կիսամյակ (մինչև 5 ամիս), իսկ պրոֆեսորադասախոսական և վարչական կազմը՝ դասավանդել կամ մասնակցել վերապատրաստումների 5 աշխատանքային օր:

Ծրագիրն ամբողջությամբ փոխհատուցում է շարժունության ընթացքում իրականացվող ծախսերը:

Հաշվետու ժամանակահատվածում այս համալսարանը չի հայտարարել ակադեմիական շարժունության մրցույթ, սակայն ՇՊՀ-ի հետ կնքել է համագործակցության նոր պայմանագիր- (https://shsu.am/wp-content/uploads/2024/01/Agreement-Granada-2021-2027.pdf)

3.2.3. ԼԻՍԱԲՈՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ, 2020-2023թթ., 2022-2025թթ.)

Ծրագրի նպատակն է.

Գործընկեր բուհեր հանդիսացող **Պորտուգալիայի համալսարանի և ՇՊՀ-ի** ուսանողների, պրոֆեսորադասախոսական ու վարչական կազմի ակադեմիական շարժունության և փոխանակումների կազմակերպումն ու անցկացումը:

Ծրագիրն ամբողջությամբ փոխհատուցում է շարժունության ընթացքում իրականացվող ծախսերը:

Ուսանողները (բակալավրի, մագիստրատուրայի, հետբուհական կրթության) հյուրընկալող համալսարանում կարող են ուսումնառությունը շարունակել մեկ կիսամյակ (մինչև 5 ամիս), իսկ պրոֆեսորադասախոսական և վարչական կազմը՝ դասավանդել կամ մասնակցել վերապատրաստումների 5 աշխատանքային օր:

Հաշվետու ժամանակահատվածում Օտար լեզուների և գրականության ամբիոնի մեկ դասախոս մասնակցել է Լիսաբոնի համալսարանում անցկացված վերապատրաստմանը, իսկ վերադառնալուց հետո ներկայացրել համապատասխան հաշվետվություն- https://shsu.am/erasmus-report-day/:

3.2.4. ՅԱՍԻԻ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՒ ՅՈՀԱՆ ԿՈՒԶԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՌՈՒՄԻՆԻԱ, 2021-2023թթ.)

Ծրագրի նպատակն է.

Գործընկեր բուհեր հանդիսացող **Ռումինիայի Յասիի համալսարանի և ՇՊՀ-ի** ուսանողների ու աշխատակազմի ակադեմիական շարժունության և փոխանակումների կազմակերպումն ու անցկացումը:

Ծրագիրն ամբողջությամբ փոխհատուցում է շարժունության ընթացքում իրականացվող ծախսերը:

Հաշվետու ժամանակահատվածում այս համալսարանը շարժունության մրցույթ չի հայտարարել, սակայն ՇՊՀ-ի հետ կնքել է համագործակցության նոր պայմանագիր- (https://shsu.am/wp-content/uploads/2024/01/Agreement-Iasi-2021-2027.pdf):

3.2.5. ՍՈՒՉԱՎԱՅԻ ՍՏԵՖԱՆ ՉԵԼ ՄԱՐԵԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՌՈՒՄԻՆԻԱ, 2021-2027թթ.)

Ծրագրի նպատակն է.

Գործընկեր բուհեր հանդիսացող **Սուչավայի Ստեֆան չել Մարեի համալսարանի և ՇՊՀ-ի** ուսանողների և պրոֆեսորադասախոսական աշխատակազմի ակադեմիական շարժունության ու փոխանակումների կազմակերպումն ու անցկացումը:

Ծրագիրն ամբողջությամբ փոխհատուցում է շարժունության ընթացքում իրականացվող ծախսերը:

Հաշվետու ժամանակահատվածում՝ 2022թ. հոկտեմբերի 1-ից 5 ամսով իր ուսումնառությունն այս համալսարանում շարունակել է Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի 3-րդ կուրսի մեկ ուսանողուհի, իսկ Պատմության և իրավագիտության ամբիոնի մեկ դասախոս մասնակցել է վերապատրաստման աշխատանքներին:

Վերադառնալուց հետո նրանք ներկայացրել են հրապարակային հաշվետվություն իրենց կատարած աշխատանքների մասին- https://shsu.am/erasmus-report-day/:

3.2.6. ՏԻՄԻՇՈԱՐԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՌՈՒՄԻՆԻԱ, 2021-2023թթ.)

Ծրագրի նպատակն է.

Գործընկեր բուհեր հանդիսացող **Ռումինիայի Տիմիշոարայի համալսարանի և ՇՊՀ-ի** ուսանողների ու աշխատակազմի ակադեմիական շարժունության և փոխանակումների կազմակերպումն ու անցկացումը:

Ծրագիրն ամբողջությամբ փոխհատուցում է շարժունության ընթացքում իրականացվող ծախսերը:

Հաշվետու ժամանակահատվածում ՇՊՀ-ի Կենսատեխնոլոգիա մասնագիտության մագիստրատուրայի առաջին կուրսի մեկ ուսանողուհի իր ուսումնառությունը մեկ կիսամյակ շարունակեց այս համալսարանում և վերադառնալուց հետո ներկայացրեց հաշվետվություն՝ պահանջվող ձևաչափով- https://shsu.am/erasmus-report-day/:

Իսկ Աշխարհագրություն բաժնի մեկ ուսանողուհի այժմ գտնվում է գործընկեր այս համալսարանում:

Որպես արդյունավետ համագործակցության արդյունք՝ Տիմիշոարայի համալսարանն այս ժամանակահատվածում ՇՊՀ-ի հետ կնքել է համագործակցության նոր պայմանագիր- https://shsu.am/wp-content/uploads/2024/01/Agreement-Timisoara-2021-2029.pdf:

3.2.7. ՆԵԱՊՈԼԻ ՖՐԻԴՐԻԽ 2-ՐԴԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԻՏԱԼԻԱ, 2021-2027թթ.)

Ծրագրի նպատակն է.

Գործընկեր բուհեր հանդիսացող **Նեապոլի Ֆրիդրիխ 2-րդի անվան համալսարանի և ՇՊՀ-ի** ուսանողների և պրոֆեսորադասախոսական աշխատակազմի ակադեմիական շարժունության և փոխանակումների կազմակերպումն ու անցկացումը:

Ծրագիրն ամբողջությամբ փոխհատուցում է շարժունության ընթացքում իրականացվող ծախսերը:

Հաշվետու ժամանակահատվածում այս համալսարանը համապատասխան մրցույթ չի հայտարարել:

Ակադեմիական շարժունության ծրագրերին ՇՊՀ աշխատակիցների և ուսանողների մասնակցությունը 2018-2023թթ. հնգամյա ժամանակահատվածում կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերներով




4,5
4
3,5
3
2,5
2
1,5
1
0,5
0
2017-2018
2018-2019
2019-2020
2020-2021
2021-2022
2022-2023
ՊԴ կազմ
Վարչական
Ուսանողներ

3.3. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ, ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում ՇՊՀ-ն կնքել է նոր պայմանագրեր ու համաձայնագրեր, ինչի արդյունքում նրա արտաքին համագործակցության շրջանակներն ընդլայնվել և ընդգրկել են նաև ներքոհիշյալ բուհերն ու կազմակերպությունները: Մասնավորապես՝ համագործակցության պայմանագրեր ու հուշագրեր են կնքվել կամ վերակնքվել ԵՄ, ՌԴ, Բելառուսի, Հնդկաստանի, Իրանի և ՀՀ մի շարք համալսարանների և այլ կազմակերպությունների հետ: Դրանց մի մասը կնքվել է ավելի վաղ, սակայն հաշվետու ժամանակահատվածում դրանց վերջնաժամկետները չեն ավարտվել: Ներքոհիշյալ համալսարանների և այլ կազմակերպությունների մի մասի հետ էլ համագործակցությունն իրականացվում է այժմ շարունակվող Էրազմուս+ միջազգային դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ

N	ԲՈՒՀԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ
1.	West University of Timisoara (Romania)	2014-2021
2.	Technische Universitate Dresden (Germany)	2017-2020, 2021-2024
3.	Universidade Catolica Portuguesa (Portugal)	2017-2020, 2021-2024
4.	University of Valladolid (Spain)	2017-2019, 2020-2023
5.	University of Granada (Spain)	2020-2023
6.	Manipal University Jaipur (India)	2020-2025
7.	Alexandru Ioan Cuza University of Iasi (Romania)	2021-2023

8.	Riga Technical University (Latvia)	2021-2024
9.	Liverpool John Moores University (Grate Britain)	2021-2024
10.	Jean Moulin Lyon 3 University (France)	2021-2024
11.	University of Strasbourg (France)	2021-2024
12.	University of Applied Sciences Krems (Austria)	2021-2024
13.	European University Continuing Education Network (Spain)	2021-2024
14.	University of Naples Federico II (Napoli, Italy)	2021-2027
15.	Stefan cel Mare University of Suceava (Romania)	2021-2027
16.	School of Arts and Humanities ULisboa (Portugal)	2020-2023
17.	Stefan cel Mare University of Suceava (Romania)	2021-2027

ԱՊՀ ԵՐԿԻՐՆԵՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ

N	ԲՈՒՀԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ
1.	Государственный гуманитарно-технологический университет (РФ)	2018-2023
2.	Российский Технологический Университет-МИРЭА (Москва)	2019-անորոշ ժամկետով
3.	Тверской государственный университет, РФ	2018-2028
4.	Витебский государственный университет, Беларусь	2020- անորոշ ժամկետով
5.	Ogareva Mordovia State University (MRSU)	2021-2024
6.	Irkutsk National Research Technical University (INRTU)	2021-2024
7.	Kazan Federal University (KFU)	2021-2024

8.	Petrozavodsk State University (PetrSU)	2021-2024
9.	Чеченский государственный педагогический университет	2021-2031
10.	Курский государственный университет	2021-2031
11.	Курский государственный медицинский университет	2022-2027
12.	Полесский государственный университет	2023-2028

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ

N	ԲՈՒՀԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ
1.	Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան	2020-2025
2.	ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ	2020- անորոշ ժամկետով
3.	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ	2019-անորոշ ժամկետով
4.	Գորիսի պետական համալսարան	2019-2029
5.	Գավառի պետական համալսարան	2019-2029
6.	ՀՀ պետական կառավարման ակադեմիա	2021-2024
7.	Հայաստանում ֆրանսիական համալսարան (UFAR)	2021-2024
8.	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղ	2023-անորոշ ժամկետով
9.	Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ	2023-2028

ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

N	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ	ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ
1.	«Դասավանդիր Հայաստան»	2016-2026
2.	«Դեպի Հայք» հիմնադրամ	2019- անորոշ ժամկետով
3.	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ	2020- անորոշ ժամկետով
4.	Գյումրու սելեկցիոն կայան	2020-2023
5.	«Բիոսոֆիա» ՀԿ	2020-2023
6.	«Բասեն» համայնքի զարգացման հիմնադրամ	2020-2023
7.	Գիտության և մշակույթի Գյումրու ռուսական կենտրոն	2020-2026
8.	Ընտրական համակարգերի միջազգային հաստատություն-IFES	2020-2022
9.	«Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամ	2020-2025
10.	«Կազա» շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, ՀՀ	2021- անորոշ ժամկետով
11.	Qeshm Voltage, Tehran	2022-2024
12.	SRM, India	2023-2026
13.	Տվերի «ԱՐԱՐԱՏ» ազգամշակութային ինքնավարություն, ՌԴ	2022-2027
14.	Հանրային կառավարման ակադեմիա ՀԿ	2023- անորոշ ժամկետով
15.	Փրոջեքթ Հարմոնի, ՀՀ	2023-2027

Պայմանագրերն ու հուշագրերը պահպանվում են Կենտրոնում: